

5.4. Թատերահանդիսային գործունեությունը 2000թ.

2000թ. հանրապետությունում գործել են 21 թատերահանդիսային կազմակերպություններ, որոնցից 12-ը՝ դրամատիկական, 4-ը՝ երաժշտադրամատիկական, 3-ը՝ տիկնիկային բնույթի են, մնացած 2-ը պատանի հանդիսատեսի թատրոնն է և հայպետկրեսը:

Երևանում գործել են 14, Շիրակի և Սյունիքի մարզերում՝ 2-ական, Արարատի, Գեղարքունիքի և Լոռու մարզերում՝ 1-ական թատերահանդիսային կազմակերպություններ:

Թատերահանդիսային կազմակերպությունների կողմից 2000թ. ցուցադրվել է 1705 (1999թ.՝ 2093) ներկայացում, որոնց 29.1%-ը կամ 497-ը՝ տիկնիկային, իսկ 13.1%-ը կամ 223-ը՝ երաժշտադրամատիկական ժանրի են: Արարատի և Գեղարքունիքի մարզային թատրոնները ներկայացումներ են կազմակերպել նաև իրենց մարզերի գյուղական բնակավայրերում: Գյուղական բնակավայրերում ներկայացումներ են կազմակերպել նաև Երևանի մի քանի թատերահանդիսային կազմակերպություններ: Այդ ներկայացումների քանակը կազմել է 150 կամ բոլոր ներկայացումների ընդհանուր քանակի 8.8%-ը:

2000թ. թատրոններ հաճախումների քանակը 1999թ. համեմատ նվազել է 99.4 հազարով և կազմել 356.5 հազ., նրանց 13.1%-ը հաճախել է տիկնիկային, 18.1%-ը՝ երաժշտադրամատիկական թատրոններ: Հանրապետության 1000 բնակչի հաշվով հաճախումները կազմել են 94, 1999թ. 120-ի դիմաց: 2000թ. պատրաստվել և հանդիսատեսին է ներկայացվել 41 նոր (1999թ.՝ 49) և 7 հիմնավերականգնված (1999թ.՝ 13) ներկայացումներ:

Թատերական ներկայացումներից ստացված հասույթը կազմել է 137.2 մլն. դրամ, որի 1.4%-ը կամ 2.0 մլն. դրամը ստացվել է գյուղական վայրերում կազմակերպված ներկայացումներից, 15.2%-ը կամ 20.8 մլն. դրամը՝ երաժշտադրամատիկական, 7.3%-ը կամ 10.0 մլն դրամը՝ տիկնիկային ներկայացումներից: Միջին հաշվով մեկ ներկայացման մուտքի վճարումներից հասույթը կազմել է 80.5 հազ. դրամ, ընդ որում գյուղական վայրերում այդ ցուցանիշը կազմել է 13.3 հազ. դրամ:

Թատերահանդիսային կազմակերպությունների ընդհանուր ֆինանսական միջոցները 2000թ. կազմել են 508.7 մլն. դրամ, որի 61.2%-ը կամ 311.5 մլն. դրամը՝ պետական բյուջեից, 6.1%-ը կամ 31.0 մլն դրամը՝ անհատույց տրված միջոցներն են (հովանավորչություն, շնորհ և այլն), 32.2%-ը կամ 163.9 մլն. դրամը՝ բնակչությանը մատուցված վճարովի ծառայություններից:

Թատերահանդիսային կազմակերպությունների ֆինանսական ընդհանուր ծախսերը կազմել են 585.5 մլն. դրամ, որի 46.7%-ը կամ 273.4 մլն. դրամը նյութական ծախսերն են (ներառյալ դրանց հավասարեցված ծախսերը), 52.1%-ը (304.9 մլն. դրամ) աշխատավարձի ֆոնդն է: Կապիտալ ներդրումները, հիմնավերանորոգման, գույքի և սարքավորումների ձեռք բերման ծախսերը կազմել են 7.2 մլն դրամ կամ ընդհանուր ծախսերի 1.2%-ը: Մեկ ներկայացման հաշվով ֆինանսական ծախսումները 2000թ. կազմել են 343 հազ.դրամ:

Պետական մասնագիտացված թատրոններն ըստ ենթակայության և ըստ մարզերի

	Թատրոնների քանակը	այդ թվում՝	
		ՀՀ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն	համայնքներ
Երևան	14	12	2
Շիրակ	2	1	1
Լոռի	1	1	-
Արարատ	1	-	1
Գեղարքունիք	1	-	1
Սյունիք	2	-	2
Ընդամենը	21	14	7

Պետական մասնագիտացված թատրոններն ըստ մարզերի

	Թատրոնների քանակը	Ներկայացումների քանակը	Հանդիսատեսների թվաքանակը, հազ. մարդ	Ստացված հասույթը, հազ. դրամ	Հաճախողների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով, մարդ
Երևան	14	1472	304.9	129800.1	207
Արարատ	2	51	4.3	654.3	84
Գեղարքունիք	1	41	5.1	528.0	124
Լոռի	1	51	8.7	1763.4	171
Շիրակ	1	54	21.7	4146.3	402
Սյունիք	2	36	11.8	292.7	328
Ընդամենը	21	1705	356.5	137184.8	209